

Արձանագրություն N3

2021թ. Ապրիլի տեղի ունեցավ 11-րդ ք դասարանի ծնողական խորհրդի նիստը՝ որին մասնակցում էին 16 ծնողներ և դասղեկ Վ. Ալիխանյանը, տնօրեն Ն. Բաբայանը, ՄԿԱԳ տնօրենի տեղակալ Զ. Գևորգյանը:

Օրակարգում

1. Ռազմամարզական փորձնական ճամբարի մասնակցության հարցը
2. Էքսկուրսիայի կազմակերպման հարցը
3. Ընթացիկ հարցեր, կարգապահություն, առաջադիմություն:

1. Լսեցին .— Ռազմամարզական փորձնական ճամբարի մասնակցության հարցը

Տնօրեն Ն. Բաբայանը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության նոր ծրագիրը՝ կապված ռազմամարզական փորձնական ճամբարի հետ: Նա նշեց, որ մեր դպրոցը ընտրվել է այս ծրագրին մասնակցելու համար և կարևոր է ապահովել մեր աշակերտների ներկայությունը, քանի որ հետագայում ճամբարը դառնալու է ուսումնական գործընթացի պարտադիր մի մասը:

Որոշեցին, որ դասարանից կմասնակցեն հետևյալ աշակերտները՝

1. Բաղայան Արփինե
2. Հակոբյան Աստղիկ
3. Ղարիբյան Սվետլանա
4. Օհանյան Էստելլա
5. Ղազարյան Լիանա
6. Գաբրիելյան Հրաչիկ
7. Գարապետյան Վարդան

2. Լսեցին .- էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Դասղեկ Վ. Ալիխանյանը իր խոսքում նշեց, որ քանի որ տարին մոտենում է ավարտին, իսկ աշակերտները դեռ չեն օգտվել ԿԳՄՍ-ի կողմից հատկացված արձեմենտային տոմսերից, լավ կլինի օգտագործել այդ հնարավորությունը և էքսկուրսիա կազմակերպել դեպի մայրաքաղաք, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան լինել և՛ Մոսկվա կինոթատրոնում, և՛ Մուսկուլյանի անվան թատրոնում, և՛ զբոսնել Երևանում:



Որոշեցին .- Հավաքել 5000 դրամ և այդ գումարի մեջ տեղավորել բոլոր ծախսերը: Գումարը կհավաքի ծնողական խորհրդի նախագահը և վերջում հաշվետվություն կներկայացնի կատարված ծախսերի վերաբերյալ:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր (բացակայություն, կարգապահություն, առաջադիմություն):

Դասղեկ Վ. Ալիխանյանը խոսեց կիսավող խմբերի հետևանքով դասարանում ձևավորված անառողջ մթնոլորտի մասին, ինչպես նաև տղաների բացակայությունների և վարքագծի հետ կապված որոշ հարցերի շուրջ: Նա նշեց, որ ձևավորված միջավայրը իր բացասական ազդեցությունն է թողնում նաև առաջադիմության վրա: Դասղեկի պարբերաբար գրույցներ է ունենում աշակերտների հետ, փորձում է հարթել ստեղծված իրավիճակը, սակայն վերջնական արդյունքի հասնելու և իրադրությունը շտկելու համար շատ կարևոր է նաև ծնողների դերը: Պետք է հետևողական լինել, կապ պահպանել դպրոցի հետ՝ դասարանում առողջ մթնոլորտն ու կրթական բարենպաստ պայմանները վերականգնելու համար:

Որոշեցին.

Առավել հետևողական լինել աշակերտների կարգապահական խնդիրները լուծելու հարցում:
Օգնել դասղեկին, մշտական կապ պահպանել դասարանի առաջադիմությունն ու կարգապահությունը վերականգնելու համար:

Մտղական խորհրդի նախագահ՝  Անայա Մկրտչյան
Քարտուղար՝  Տաթև Թարոյան